ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ
ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

1995 թ. մայիսի 9-ին լրանում է 50-տարին այն պատմական օրվանից, երբ հաղթանակով ավարտվեց պատմության մեջ իր մասշտաբներով ու անողոքությամբ աննախադեպ պատերազմը։ Գերմանական ֆաշիզմը նպատակ ուներ հրով ու սրով հաստատել համաշխարհային տիրապետություն։ «Սպանիր ամեն մի ռուսի, ամեն մի խորհրդային քաղաքացու, կանգ չառնես, եթե քո առջև ծերունի է, կամ կին, աղջիկ է կամ երեխա, սպանիր»,—այսպես էր հրամայել Հիտլերը իր զինվորներին։

Չնայած խորհրդային բանակի անձնվեր ու հերոսական դիմադրությանը, ֆաշիստական զորքերին հաջողվեց պատերազմի սկզբում արագ նվաճել խորհրդային հանրապետությունների շատ տարածքներ, մոտենալ Անդրկովկասին։ Սպառազինված Թուրքիան սպասում էր Ստալինգրադի անկմանը, որ խուժեր Կովկաս։ Թեև խորհրդային Հայաստանի տարածքում ռազմական գործողություններ տեղի չունեցան, սակայն հայ ժողովրդի զավակները ամենաակտիվ մասնակցությունն ունեցան 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին։ Համարելով այն իրենց սրբազան գործը, նրանք անօրինակ սխրագործություններ կատարեցին բոլոր ռազմաճակատներում, պարտիզանական ջոկատներում. մասնակցեցին եվրոպական դիմադրողական շարժմանը, թիկունքում կատարած անձնվեր աշխատանքով իրենց արժանի ավանդը մտցրին ընդհանուր թշնամու դեմ մղված պայքարում։ Համաշխարհային երկրորդ պատերազմում հազարավոր սփյուռքահայեր հերոսաբար կռվում էին դաշնակիցների բանակում, մասնակցում պարտիզանական շարժմանը, նյութական միջոցներով օգնում առաջադիմական ուժերին։ Պատերազմի հենց սկզբից հայ ժողովուրդը հաստատուն կերպով իր արժանի տեղը գրավեց իրենց անկախության ու ազատության համար Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում։

Անուրանալի են հայ մտավորականության մեծ ծառայությունները ֆաշիզմի դեմ հաղթանակն ապահովելու գործում։ Հայ գիտնականները, գրողները, արվեստի ու մշակույթի այլ բնագավառի գործիչները անդոսլ աշխատանք տարան իրենց հայրենիքը թշնամուց պաշտպանելու գործում։ Նրանք խորապես գիտակցում էին, որ պատերազմի ռազմաճակատներում լուծվում է նաև հայ ժողովրդի ճակատագրի հարցը։ Գերմանական ֆաշիզմը, իր վաղեմի դաշնակից Թուրքական ջարդարարների հետ միասին կրկին պլանավորել էր նվաճել Հայաստանը, ֆիզիկապես բնաջնջել հայ ժողովրդին։

Իրենց հայրենիքի պաշտպանների առաջավոր շարքերում էին գտնվում նաև հայ գրողները, որոնցից շատերը մեկնեցին ռազմաճակատ, մյուսները թիկունքում գործում էին՝ «ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանով։ Պատերազմի բոլոր տարիներին հայ գրողների բանակը գլխավորում էր հանճարեղ բանաստեղծ ու քաղաքացի, ակտիվ հասարակական գործիչ, հայ ժողովրդի մեծ զավակ Ավետիք Իսահակյանը, որը, չնայած իր պատկառելի տարիքին, գործում էր անսպառ եռանդով ու նվիրվածությամբ, Հայաստանի և ողջ աշխարհի հայությանը ոգեշնչում էր նոր սխրանքների ընդդեմ ոխերիմ թշնամու, հանուն հայրենիքի։ Հայ ժողովուրդը իր զավակներին պատ-

վիրել էր միշտ հիշել, որ ռազմաճակատի որ հատվածում էլ կռվելիս լինեն գերմանական ֆաշիզմի դեմ, նրանք կռվում են հանուն հարազատ Հայաստանի գոյության, փրկության, ազատության։

Պատերազմի բոլոր տարիներին գտնվելով քաղաքամայր Երևանում, Իսահակյանը ապրում էր իր ժողովրդի, Խորհրդային Միության, ողջ առաջադեմ մարդկության շահերով, ակտիվորեն մասնակցում էր թշնամու դեմ հաղթանակի ապահովման համար մղված պայքարին։ «Հիմա ամեն մի խոհ և գործ,—ասում էր նա,—հաղթանակի համար, միայն և միայն հայրենիքի պատվի և հաղթանակի համար»[1]։ Պատերազմի նախօրյակին, 1941 թ. մայիսին Իսահակյանը Մոսկվայում գլխավորում էր հայ գրականության տասնօրյակի մասնակից հայ գրողների պատվիրակությունը։ Մայրաքաղաքի գրողների ակումբում տեղի է ունենում նրա ստեղծագործական երեկոն։ Վարպետին մեծարում են ռուս գրականության ականավոր դեմքերը՝ Ա. Տոլստոյը, Վ. Կատաևը, Վ. Իվանովը, Ն. Ասեևը, Լ. Լեոնովը, Վ. Լեբեդև-Կումաչը, Կ. Ֆեդինը, Լ. Սոբոլևը, Ա. Տվարդովսկին։ Տասնօրյակի ավարտից անմիջապես հետո նա գալիս է Էսենտուկի հանգստանալու, որտեղ էլ իմանում է ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման մասին։ «Գազան Հիտլերը արյան ծարավի է,—գրում է նա հունիսի 28-ին,—իբրև նոր Աթիլա և վերջ ի վերջո պիտի խեղդվի իր ծովերով թափվող արյան մեջ»[2]։ Նույն օրը Իսահակյանն Էսենտուկիում գրում է իր «Ռազմակոչ» բանաստեղծությունը՝ ահեղ վրեժով գոտեպնդված, ռազմի դաշտ մեկնելու և հերոսանալու մասին։ Թշնամու դեմ հաղթանակի խոր հավատը բանաստեղծն առաջին հերթին կապում էր ռուս ժողովրդի հզորության հետ։ Հունիսի 10-ին Էսենտուկիից նա գրում էր. «Այստեղ նույնպես ժողովուրդը հանգիստ է և ինքնավստահ. զգում ես, որ ռուսը շատ մեծ է և հանգիստ ժողովուրդ է, ցղայնություն չի ցույց տալիս, հավատացած է վերջնական իր հաղթանակի մասին»[3]։

1941 թ. հունիսի 26-ին Էսենտուկիում որած «Ռազմակոչ» բանաստեղծության մեջ դիմելով վեհ հայրենիքի կտրիճ զավակներին, քաջ ժողովուրդներին, պոետը կոչ էր անում.

Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի ռազմի դաշտ սուրբ դրոշի տակ
Դեպի բարձունքը մահի ու փառքի,
Վանեցեք՝ հեռու թշնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցե՛ք հեռու։
Հավերժ պիտ մնա Հայրենիքը մեր,
Հոր և ազատ և հավերժ կանգուն
Մեր իդեալների սուրբ արևի տակ։
Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի բարձունքը մեծ հաղթանակի[4]։

1941 թ. օգոստոսի 3-ին Իսահակյանը գրում է իր «Ֆաշիզմը պիտի խորտակվի» ծավալուն հոդվածը, որում դատապարտում է հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը Մեծ Միության խաղաղ քաղաքների ու ազգաբնակչության վրա։ Հայրենական պատերազմը նա որակում է որպես սրբազան պատերազմ արյունարբու ագրեսորի դեմ։ «Մենք ճանաչում էինք ու սիրում կլասիկ Գերմանիան,—գրում է Իսահակյանը,—«բանաստեղծների

1 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու, 6 հատորով. հ. 5, Երևան, 1977, էջ 334։

2 Նույն տեղում, հ. 6, էջ 357։

3 Նույն տեղում, էջ 359։

4 Նույն տեղում, հ. 1, էջ 358։

ու փիլիսոփաների հայրենիքը», ռոմանտիկական կապույտ ծաղկի երկիրը... Սակայն այդ Դերմանիան ճզմվել է «պրուսական» յունկերի կրունկի տակ... Արյունածարավ Հիտլերը իր վայրագ հորդաները բաց թողեց Եվրոպայի վրա՝ նենդությամբ, խաբեությամբ, սարսափներով, նախճիրներով նվաճելով խաղաղասեր ժողովուրդներին, և ճզմեց իր բրոնզե կոշիկի տակ», կայծակուսային պատերազմ է սանձազերծել նաև Խորհրդային Միության դեմ։ Իսահակյանը հաղթանակի խորը հավատով հայտնում է, որ Հիտլերի Բլից-կրիգը վերջնականապես կջախջախվի մեր հայրենիքի պատնեշի ժայռերին դիպչելով և նորից ազատություն կգա բոլորի համար։ «Մեր գործը արդար է,— պրում էր Իսահակյանը,—պատմության լոգիկան մեր կողմն է. մեր կողմն է նվաճված ժողովուրդների համակրանքը, մեր կողմն է համայն աշխարհի աշխատավորների համակրանքը... Մեր վերջնական հաղթությունը ավանտյուրիստ ավազակի՝ Հիտլերի վրա ուպահովված է»[5]։ Հաղթանակի նկատմամբ խորը հավատով են տոգորված պոետի բոլոր երկերը, նրա ողջ գործունեությունը։

1941 թ. օգոստոսի 17-ին Ավետիք Իսահակյանի, Մ. Սարյանի, Հ. Մանանդյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Հ. Օրբելու և Հայաստանի մշակույթի ու գիտության այլ ականավոր գործիչների ստորագրությամբ «Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է դիմում՝ ուղղված արտասահմանյան երկրների բոլոր հայերին, որում նշվում էր, որ հեքիաթային փյունիկի նման մոխրից ու բոցերից վերածնված ազատասեր հայ ժողովուրդը մյուս ժողովուրդների հետ բարձրացել է արյունարբու ֆաշիզմի դեմ, ժողովրդի հոգում վերակենդանացրել Սասնա դյուցազունների հերոսական ավանդույթները, և Հայաստանի հազարավոր խիզախ զավակներ կարմիր բանակի շարքերում հերոսաբար մարտնչելով հանուն հայրենիքի, ջախջախում են հիտլերյան հորդաներին։ Հայ գործիչները կոչ էին անում սփյուռքի բոլոր հայերին համախմբել իրենց ուժերը հանուն Խորհրդային Միության պաշտպանության, հանուն մարդկության խաղաղ ու վտանգավոր թշնամու՝ ֆաշիզմի ոչնչացման[6]։

1941 թ. նոյեմբերի 29-ին «Սովետական Հայաստան» թերթը տպագրում է Իսահակյանի «Մեր իդեալներն անսասան են», իսկ նոր տարվա նախօրյակին՝ «Նոր տարվա շեմքին» հոդվածները, որոնցում վարպետը իր խոր հավատն է արտահայտում հաղթանակի նկատմամբ։ 1942 թ. փետրվարի 3-ին Մոսկվայում լույս տեսնող «Литература и искусство» թերթում տպագրվում է Իսահակյանի «Պատմության տրամաբանությունը մեր օգտին է» հոդվածը, իսկ նույն թվականի հունիսի 22-ին, պատերազմի տարելիցի առթիվ՝ «Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը», որն առաջին անգամ տպագրվում է «Սովետական գրականություն» ամսագրում։ Այդ ծանր օրերին, երբ թշնամին գտնվում էր Կովկասյան նախալեռներում, շրջապատել էր Լենինգրադը, ընդհուպ մոտեցել էր Մոսկվային, Իսահակյանը գրում էր. «...Հեռու չէ այն փառավոր օրը, երբ պիտի խորտակվեն չար ուժերի ոհմակները, պիտի փշրվի խավարի բռնակալությունը և տառապած մարդկության համար պիտի գա երջանկության, ազատության, ազնիվ աշխատանքի և ստեղծագործության մի նոր, պայծառ ժամանակաշրջան»[7]։ Մեծ հայրենասերը ոգեշնչում էր իր ընթերցողներին հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագներով, «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի թուր-կայծակիով, որով նա պաշտպանել է իր հայրենի տունն ու ապրելու իրավունքը։ Վայրագ բարբարոսներն անընդհատ ներխուժել են Հայաստան, բայց հայ ժողովուրդը մի ձեռքին սուր, մյուս ձեռքին մշակույթի զենքերը, հերկել է իր հողը և կերել արդար հացը, ստեղծել հոյակապ դասական լեզու, արվեստի

---

5 Նույն տեղում, հ. 5, էջ 326, 334։

6 «Սովետական Հայաստան», 1941, № 195։

7 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 5, էջ 340։

հրաշալիքներ, ավելի մեծ հույսով ու հավատով հավատացել իր փառավոր ապագային։ Իսահակյանը մերկացնում էր թուրքական բարբարոսներին, արյունարբու Սուլթան Համիդին, նրանց հովանավոր Վիլհելմ II-ին, որը խրախուսել էր հայկական ջարդերը։ Վարպետը հորդորում էր հայ զինվորին հիշել այդ բոլորը և երբ հանդիպի գերմանական զորքին գիտենա, որ հայ ժողովուրդը իրավունք ունի մահու չափ ատելու իր թշնամուն և սիրելու իր բարեկամներին, որոնց մեջ Իսահակյանն առանձնահատուկ տեղ էր տալիս ռուս ժողովրդին, որի ուսերին էր ընկած պատերազմի ծանրությունը։ Պատերազմի նոր հերոսների մեջ Իսահակյանը տեսնում էր հայ ժողովրդի պատմական հերոսների վերակերտումը, Վարդան և Վահան Մամիկոնյանների, Թեոդորոս Ռշտունիների և Թաթուլ Վանանդեցիների մարտնչող ոգին, Սմբատ և Վահրամ սպարապետների, Խութեցի Հովնանի և Դավիթ Բեկի վերստին վառվող արյունը՝ նոր հերոսների սրտերի մեջ։

1942 թ. ապրիլի 4-ին Իսահակյանը գրում է «Սիրելի հերոս Ս. Գ. Զաքյանի անմահ հիշատակին» բանաստեղծությունը՝ նվիրված Ղրիմում կազմակերպված 390-րդ Հայկական հրաձգային ռիվիզիայի հրամանատար, Կերչում մղված մարտերում հերոսաբար զոհված Սիմոն Զաքյանին։ Դիմելով հերոսին պոետը գրում է.

Մեր ցասումը, մեր վրեժը, ո՛վ հերոս,
Քո երկաթե բազուկիդ մեջ դու տարար,
Եվ զարկեցիր նենգ թշնամուն բարբարոս,
Ոսոխի դեմ դարձար վահան ու պատվար։

Քե՛զ հավերժ փառք... հանգչիր խաղաղ ու անդորր,
Նոր հերոսներ կկայծակեն քո հետքով,
Հայաստանը կբողբոջի նորից նոր,
Կզարդարե քո շիրիմը վարդերով[8]։

Իսահակյանը խորը հարդանքով ու հիացմունքով է խոսում համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին Ֆրանսիայում պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատների հրամանատար, 1944 թ. փետրվարի 21-ին Փարիզում հիտլերականների կողմից գնդակահարված բանաստեղծ Միսակ Մանուշյանի մասին։ «Հայ ժողովուրդը հպարտ է Մանուշյանով,—գրում էր Իսահակյանը,—որի շիրիմի առաջ դուխ խոնարհեցին երախտագետ ֆրանսիացիները և նրա պանծալի անունով փողոց կոչեցին Փարիզում, մի պատիվ, որ առաջին անգամ տրվում է մի հայի և, շեշտենք, որ նա հայության անունը շատ բարձրացրեց Ֆրանսիայի աչքում։

Հայ ժողովուրդը իր պաշտելի հերոսների ոսկե գրքում սիրով պիտի գրե Միսաք Մանուշյանի անմահ անունը, որով տերունդները պիտի խանդավառվեն և հպարտանան»[9]։

Պատերազմի տարիներին Իսահակյանը հաճախակի է լինում Հայաստանի տարբեր շրջաններում, մեկ ամիս ու կես նա հյուրընկալվում է Թալինի շրջանի սասունցիների մոտ։ Այդ մասին նա գրում է «Սասունցի 'կոլտնտեսականների մոտ» ակնարկը, որն առաջին անգամ տպագրվում է Անդրկովկասյան զինվորական ռազմաճակատի «Մարտիկ» թերթում։ «Սասունցիները տեսել են պատերազմի արհավիրքները (1914—1919 թթ.) և այժմ ամբողջ հոգով ձգտում են և աշխատում Հայրենական պատերազմը հաղթանակով պսակված տեսնել՝ որպեսզի կրկին չընկնեն աղետների և ավերածությունների մեջ»[10]—գրում էր պոետը։

---

8 Նույն տեղում, հ. 1, էջ 364։
9 Նույն տեղում, հ. 5, էջ 385։
10 Նույն տեղում, հ. 5, էջ 363։

Պատերազմի տարիներին Հայաստանի գրողները Իսահակյանի ղեկավարությամբ բազմիցս քննարկում են իրենց խնդիրները նոր պայմաններում։ Վարպետն այդ բոլորի ոգեշնչողն ու կազմակերպիչն էր։ Մերկացնելով ֆաշիստական զավթիչներին, ցույց տալով նրանց գազանային էությունը, հայ գրականությունը ժողովրդի մեջ էլ ավելի էր ամրապնդում հաղթանակի հավատը։ Համակված խոր հայրենասիրությամբ, շատ հայ գրողներ հերոսաբար զոհվեցին պատերազմի ռազմաճակատներում։ Իսահակյանը մասնակիցն էր հակաֆաշիստական միտինգների, հայ զինվորներին, խորհրդային ժողովուրդներին ուղղված հայրենասիրական նամակների կազմման, որոնց մեջ թշնամու դեմ միասնաբար կռվելու կոչեր էին արվում։

1942 թ. օգոստոսի 15-ին «Կոմունիստ» թերթում տպագրվում է Իսահակյանի, Մ. Սարյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Օրբելու, Հայկանուշ Դանիելյանի, Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Վ. Վաղարշյանի, Արա Սարգսյանի և ուրիշների ստորագրությամբ ուկրաինական ժողովրդին ուղղված՝ «Մենք ձեզ հետ ենք, Ուկրաինայի եղբայրներ» նամակը։ 1942 թ. աշնանը ռազմաճակատ է ուղարկվում հայ ժողովրդի նամակը հայ ռազմիկներին. ստորագրել էին 335336 մարդ, նրանց թվում էր Իսահակյանը։ Նամակը քննարկվեց բոլոր հայկական զորամիավորումներում, տպագրվեց կենտրոնական և ճակատային թերթերում և լայն արձագանք գտավ։ Նամակում ընդգծվում էր, որ «Հիտլերյան արյունարբու բորենու դեմ մղվող պատերազմում վճռվում է Խորհրդային Միության բախտը, հայ ժողովրդի բախտը»[11]։ Պատասխանելով մայր ժողովրդի կոչին, հայ ռազմիկները երդվում էին սրբությամբ կատարել նրա պատվիրանները[12]։ Սփյուռքահայության վրա մեծ ազդեցություն է գործում 1943 թ. սկզբին Ֆրեզնոյում և Նյու Յորքում լույս տեսած Իսահակյանի գրքույկը, որում նա կոչ էր անում բոլոր հարերին միասնաբար մտնել Հայրենիքի պաշտպանության սրբազան դրոշի տակ։ «Թող ամեն մարդ իմանա,— ասված էր նամակում,—որ Հիտլերի անկումը անխուսափելի է և որոշ, այս հավատով և համոզմունքով է, որ մեր ժողովուրդը կկռվի հզոր Կարմիր բանակի դրոշի տակ, ներշնչված մեր արդար դատով»[13]։

Գրողների տանը Մարիետա Շահինյանի «Խորհրդային գրողների աշխատանքը պատերազմի տարիներին» զեկուցման առթիվ ունեցած իր ելույթում Իսահակյանը ցույց է տալիս հայ գրողների մեծ ավանդը թշնամու դեմ մղված պայքարում։ Իսահակյանի հրապարակախոսությունը և բանաստեղծությունները, Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը, «Ձայն հայրենական» պոեմը, Հ. Քոչարի պատմվածքներն ու հրապարակախոսությունը, Գ. Սարյանի և Հ. Շիրազի քնարերգությունը և այլ գործեր պատերազմի տարիների հայ գրականության նվաճումներն էին։

1943 թ. նոյեմբերի 25-ին, պատերազմի ծանր օրերին կազմակերպվում է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան, որի առաջին իսկական անդամների կազմում հաստատվում է նաև Ա. Իսահակյանը։ Այդ կապակցությամբ մամուլում տպագրված իր խոսքում ակադեմիկոս Իսահակյանը նշում է, որ «Հայաստանի ակադեմիայի բացումը մի նոր ջախջախիչ հաղթանակ է խավարակուլ հիտլերիզմի վրա, միաժամանակ սիմվոլիկ փաստ է մեր ողջ լուսավոր պետականության»[14]։

1942—1945 թթ. հայ մամուլում և այլ օրգաններում տպագրվում է Իսահակյանի՝ «Մահ գերմանական օկուպանտներին», «Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը անսասանելի է», «Մեր բաղձանքները», «Հաղթանակը պրոգրեսի կողմն է», «Փառահեղ տարեդարձը» (Կարմիր բանակի 25-ամյակի

---

11 Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին. Երևան, 1943, էջ 6—7։

12 Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին. Երևան, 1944։

13 Ավ. Իսահակյան. Արկածախնդիրները. Նյու Յորք, 1943, էջ 125։

14 «Սովետական Հայաստան», 1943, № 242։

առթիվ)։ «Հաղթանակն արդար գործի կողմն է», «Սովետական Հայաստանի 23-րդ տարեդարձին», «Մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը», «Մղձավանջը վերջացավ» և այլ հոդվածներ։ Դրանց մեջ, իր բազմաթիվ ելույթներում, բանաստեղծություններում, Իսահակյանը հիմնավորում ու զարգացնում է հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության, առանձնապես ռուս ժողովրդի հետ սերտ համագործակցության գաղափարը, ատելությունը ֆաշիզմի, պատերազմի հրձիգների դեմ, խոր հավատ հաղթանակի նկատմամբ։ 1942 թ., երբ ֆաշիստական հորդաները հասել էին Կովկասյան նախալեռներին և ձգտում էին մտնել Անդրկովկաս, Իսահակյանը գրում էր. «Միայն մի կարգախոս ունենք մենք հիմա՝ կռվենք և չթողնենք, որ թշնամին պղծի մեր նվիրական ընտանիքի շեմը, մեր պողպատակուռ լեռների պես կանգնենք թշնամու առաջ, կռվկասյան դռները մեր կրծքով փակենք թշնամու առաջ։ Անենք ավելին, քան ինչ որ կախված է մեզանից, ամեն գնով փրկենք մեր ընտանիքի պատիվը, մեր հոգեկան և նյութական հարստությունները»[15]։ «Հաղթանակը պրոգրեսի կողմն է» հոդվածում Իսահակյանը ընդգծում էր. «Մենք գիտենք, որ իրերի անողոք տրամաբանությամբ հիտլերյան խելացնորությունը անշուշտ դատապարտված է չարաչար խորտակման։ Հաղթանակը պրոգրեսի և մեր արդար,սրբազան գործի կողմն է։ Աշխարհը կփրկվի քսաներորդ դարի այդ թարախակալած խոցից»[16], Իսահակյանն իր սրտի խոսքն էր ասում ոտղղված հայ ժողովրդի քաջարի զավակներին, որոնք հերոսաբար կռվում էին թշնամու ավազակային ոհմակների դեմ։ Նա նշում էր, որ հայրենական սրբազան պատերազմի մեջ հայ մարտիկները իրենց հերոսական գործերով ապացուցեցին, որ արժանի որդիներն են հին, պատմական, ազատասեր ժողովրդի, որն իր երակների մեջ կրում է իր սքխրագործ նախնիների արյունը։ «Հայ մարտիկները,—գրում էր Իսահակյանը,—աշխարհի առաջ բարձրացրին հայ ժողովրդի պատիվն ու անունը, և մեր հնադարյան պատմությունը վսեմացրին նորանոր պանծալի դրվագներով»[17]։

Վարպետը խոր հավատով հայտնում էր, որ մոտ է հաղթանակը, և քաջարի մարտիկները տուն կվերադառնան, նոր թափով ձեռ կզարկեն աշխատանքին, հայ ժողովուրդը կոիմի նորանոր տնտեսական ու կուլտուրական նվաճումների, կբարելավի իր կենցաղը, կիմաստավորի իր ազգային գոյությունը արվեստով, գրականությամբ և գիտությամբ՝ համաշխարհային եղբայրության գաղափարներով ներշնչված։ Վարպետը ցանկություն էր հայտնում Խորհրդային Հայաստանի 24-րդ տարեդարձը տոնելու խաղաղության օրերում[18]։

1945 թ. մայիսի 9-ին, հաղթանակի օրվա առթիվ Իսահակյանը տպագրում է իր «Մղձավանջը վերջացավ...» հոդվածը, նշում բոլոր ժողովուրդների մարդկային հոգու ամենանվիրական բաղձանքի, խաղաղության ավետումը, որին չորս տարի շարունակ սպասել են բոլորը՝ ռազմի դաշտում ամեն վայրկյան մահվան դեմ հանդիման կանգնած մարտիկները, նրանց մայրերն ու քույրերը, հայրերն ու եղբայրները։ «Այսօր Բեռլինի վրա ծփում է Միության դրոշը,—գրում էր Իսահակյանը։—

Միության ժողովուրդները ամենադժվարին գործը կատարեցին՝ ֆաշիզմի տապալումը և դեմոկրատիայի հաղթանակը։ Մեծ Միությունը իր անթիվ զոհերով ու զոհաբերումներով, իր անպատմելի սխրագործություններով արժանացավ հավերժական փառքի և պատմության շողշողուն բարձունքին։

Հայ ժողովուրդը իր քաջ զավակներով, իր կտրիճ զորավարներով, իր բոլորանվեր մասնակցությամբ Հայրենական պատերազմում արդար բաժին

---

15 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 5, էջ 348։
16 Նույն տեղում, էջ 355։
17 Նույն տեղում, էջ 360։
18 Նույն տեղում, էջ 369։

ունի Միության փառքին և պատմության անմահությանը։ Նա հերոսական կարգի բանակում կռվեց հերոսաբար և հերոսացավ»[19]։

Հաղթանակի օրվա կապակցությամբ Իսահակյանը գրում է իր «Մեծ հաղթանակի օրը (9 մայիսի 1945)» բանաստեղծությունը, որը պատերազմում զոհված հերոսներին նվիրված սքանչելի գործ է.

Մեր սուրը փառքով դրեցինք պատյան,—
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան,
Երդեր են հորդում զվարթ սրտերից։

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եվ զարկում նորից գավաթներն իրար։
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ—
Էս էլ իմ որդուս հանգստյան համար։

Դլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ.
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում գինին սուրբ հացի վրա[20]։

Մեծ Հայրենականի մասնակից մարտիկներն ու հրամանատարները սիրով էին կարդում Իսահակյանի գործերը, արժանին տալիս հայ մեծ բանաստեղծին ու քաղաքացուն։ Պատերազմից անմիջապես հետո, 1945 թ. հուլիսին, նշվում է Իսահակյանի ծննդյան 70-ամյակը։ Այդ կապակցությամբ ողջույններ են ստացվում նաև կարմիրբանակայիններից։ N զորամասի հրամանատարներն ու մարտիկները հայ ժողովրդի մեծատաղանդ բանաստեղծին, հայրենիքի մեծ մտածողին ու քաղաքացուն գրում էին. «Թանկագին վարպետ... տասնամյակների ընթացքում, Դուք ձեր բեղմնավոր գրչով ստեղծել եք այնպիսի գործեր, որոնք ոգևորության անսպառ աղբյուր են հանդիսացել չարի, խավարի և անարդարության դեմ սերունդների մղած պայքարում։

Հայրենական պատերազմի ահեղ տարիներին Ձեր բոցաշունչ խոսքը, Ձեր անզուգական քնարի հոգեզմայլ ձայնը մեզ մարտի էր մղում անարգ թշնամու դեմ՝ հանուն մեր ժողովրդի ազատության»[21]։

Պատերազմի տարիներին իր ժողովրդին հանուն ազատության ու անկախության մարտնչելու կոչ անելով, հաղթանակից հետո Իսահակյանը հանդես է գալիս որպես խաղաղության ու դեմոկրատիայի մեծ մարտիկ։ 1949 թ. Մոսկվայում տեղի ունեցած խաղաղության կողմնակիցների համամիութենական առաջին կոնֆերանսում նա հայտարարում է. «Հայ ժողովուրդը, որ բազմիցս իր վրա զգացել է պատերազմի բոլոր սարսափները, ամենայն անկեղծությամբ իր ողջ էությամբ կանգնած է խաղաղության պաշտպանության դիրքերում ընդդեմ պատերազմի»[22]։ 1950 թ. խաղաղության կողմնակիցների

19 Նույն տեղում, էջ 375։
20 Նույն տեղում, հ. 1, էջ 377։
21 «Գրական թերթ», 1945, № 21։
22 «Պրավդա» 1949, 30 օգոստոսի։

միութենական երկրորդ կոնֆերանսում Իսահակյանը ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի, Նաիրի Զարյանի հետ միասին, որպես Հայաստանի ներկայացուցիչ ընտրվում է խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի կազմում։

Իր ողջ գիտակցական կյանքում, իր բեղմնավոր ստեղծագործություններով Ավետիք Իսահակյանը մնաց ժողովրդի հետ, կիսեց նրա պարտությունների դառնություններն ու հաղթանակի բերկրանքը և գնաց դեպի անմահություն։

АВЕТИК ИСААКЯН В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Академик НАН РА Г. Б. ГАРИБДЖАНЯН

Резюме

В годы Великой Отечественной войны Аветик Исаакян, твердо веря в победу, вдохновлял армянских воинов на борьбу с фашизмом, поднимал их патриотический дух и стойкость. В годы войны им было создано немало стихов, таких как «Бранный клич», «Сердце мое на вершинах гор», «Вечной памяти Закьяна», публицистических статей—«Смерть немецким оккупантам», «Отечественная война и армянский народ», «Победа на стороне прогресса», «Слава и гордость нашего народа» и других, которые внесли свой вклад в дело победы советского народа над фашизмом.